



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ո. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«28.08» 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵՀՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՀԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆԱՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000062

Ձեռնարկողը՝

«ԶԵՐՄ ԱՍՎԴՂԵՐ» ՍՊԸ

Երևան, Եզնիկ Կալքացի 1ա բն. 73

Գործունեությունը՝

Բանեցված անվադողերի վերամշակման շրջակա միջավայրի
վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝

Ա. Ժարզյան



Առջիր եզրակացությունը՝ 5 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ**

թիվ ԲՓ 000067

28 082020թ.

**«ԶԵՐՄ ԱՍՊԾԵՐ» ՍՊ ընկերության կողմից նախադեսվող
բանեցված անվադողերի վերամշակման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն**

Ներածական մաս

Ձեռնարկող՝	«ԶԵՐՄ ԱՍՊԾԵՐ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/
Գործունեության տեսակը՝	Ա կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» <<օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 3-րդ կետի ա) ենթակետի, բանեցված անվադողերի վերամշակումը դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նկարգրական մաս: «ԶԵՐՄ ԱՍՊԾԵՐ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից նախատեսվում է վերամշակել բանեցված անվադողերը, որոնք անկանոն ծևով կուտակվում և աղտոտում են շրջակա տարածքների հողածածկը և ջրային ռեսուրսները: Արտադրությունը վարձակալական հիմունքներով նախատեսվում է կազմակերպել Երևան քաղաքի հարավային արտադրական գոտում՝ Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդ փողոցի 14/11 հասցեում: Տարածն ամբողջությամբ բետոնապատ կամ ասֆալտապատ է, շրջապատված է չգործող արտադրական կազմակերպություններով և պահեստային շինություններով: Արտադրությունը կազմակերպելու համար տարածքում առկա են պահանջվող կառույցները և ենթակառուցվածքները /արտադրական շինություններ, գործող՝ էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և կոյուղու ցանցեր, ճանապարհներ/:

Նախատեսվող գործունեության նպատակն է բանեցված անվադողերի վերամշակման արդյունքում, մանրացված կտորներից արտադրել ուստինային սալիկներում կպատվեն խաղահրապարակները և մարզադաշինները:



Նախապատրաստման փուլում կիրականացվեն երկու արտադրական շինությունների ներքին վերանորոգման աշխատանքներ, կտեղադրվեմ անվաղողերի կտրտման-դասակարգման հոսքագիծը:

Անվադողերը պետք է գնվեն թափոնների հավաքմամբ զբաղվող ընկերություններից, կամ տարբեր ձեռնարկություններից, որոնց ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում առաջանում են բանեցված անվադողերի թափոններ: Բանեցված դողածածկանները բաղկացած են հետևյալ հիմնական բաղդիչներից:

- բարդ կառուցվածքով վոլվկանացված ռետինե հիմնամաս,
 - ամրացնող մետաղական լարեր,
 - ամրացնող սինթետիկ թելեր,

Նշված նյութերի տոկոսային ցուցանիշը կախված է դողաձաձկանների տեսակից և չափերից: Արտադրամասի արտադրողականությունը կազմում է 500 կգ/ժամ՝ բանեցված անվարողերի հաշվարկով: Անհրաժեշտ քանակի հումքի /անվարողեր/ առկայության պայմաններում, տարեկան արտադրողականությունը կկազմի՝ 1040 տ/տարի: Սալերի արտադրական ծավալները կախված կլինեն պատվերների հիման վրա ծևավորվող սալիկների և սալերի չափերից: Արտադրական գործընթացում օգատոգրծվելու են նաև կաղապարներ և սոսինծ/լցոնիչ: Որպես սոսինծ օգտագործվելու է պոլիուրեթանային /ՊՈՒ/ սոսինծ, որը շինարարության մեջ օգտագործվում է նաև որպես ցեմենտի փոխարինող: Այն արտադրական տարածք կբերվի համապատասխան տարողություններով, նույն տարողություններով կրկին պահանջվող քանակը կլրացվի:

Արտադրական-տեխնոլոգիական սխեման բաղկացած կլինի երկու մասից՝ անվադողերի կտրատման, մանրացման, մետաղական մասերի առանձնացման հանգույցներ և սալերի պատրաստման հանգույց:

Անվադողերը ավտոտրանսպորտով տեղափոխվելով բացօթա արտադրական տարածք պահեստավորվում են, այնուին տեղափոխվում դողաձաձկանների վերամշակման փակ շինության տեղամաս, որտեղ դողաձաձկանները ենթարկվելու են բազմափոկ մանրացման: Առաջին սարքի միջոցով անվադողերը ենթարկվում են կողային մասի կտրման/առանձնացման, իսկ երկրորդ սարքի միջոցով կատարվում է մետաղական լարերի առանձնացում: Երրորդ սարքի միջոցով /որն իրենից ներկայացնում է աղաց/ դողաձաձկանի մարմինը և առանձնացված հատվածը մանրացվում են և արդյունքում ստացվում է ուստինային խոշոր կտորներ: Առաջնային կտրատման արդյունքում առաջացած ուստինե կտորները փոխակրիչի միջոցով տեղափոխվում են մագնիսական անջատիչ, այնուին մանր մասնիկները տեղափոխվելու են հաջորդ մանրացման սարքավորում, իսկ մետաղական մասերը հավաքվում են թափոնների կուտակման տեղամասում:

Վերջնական մանրացված և մետաղական մասերից մաքրված ռետինե զանգվածը սայլակների միջոցով տեղափոխվում է հաջորդ արտադրական շինություն, որտեղ լցվում են հատուկ կաղապարների մեջ: Կաղապարների մեջ կատարվում է զանգվածի սեղմում հատուկ մամլիչի միջոցով, ավելացվում է լցանյութեր /սոսինծ/, որի չորացումից հետո ստացվում է ռետինե սալերի վերջնական արտադրանքը:

Քանի որ գործունեությունն իրականացվելու է գոյություն ունեցող շինություններում և օգտագործվելու են գոյություն ունեցող ենթակառուցվածքները, գործունեության



իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝ բանեցված անվադողերի տեղափոխման, պահեստավորման, կտրատման, մանրացման աշխատանքների, ինչպես նաև սալերի պատրաստման հետ: Թափոնների հետ աշխատանքը ևս կարող է պարունակել ոիսկեր սպասարկող անձնակազմի համար:

Բացառությամբ կտրման սարքի և մետաղական լարերի առանձնացման առաջին հանգույցի, մնացած բոլոր հանգույցներում սարքերը կահավորված են տեղական օդաքարշ համակարգերով, որոնք բաղկացած են օդի հավաքման սարքից /զոնտ/, օդամղիչից, փոշու հավաքման պարկից և արտանետման խողովակից: Այս համակարգի նվազագույն արդյունավետությունը կազմում է 80 %: Բոլոր երեք սարքերի արտանետման խողովակները միանում են և մեկ խողովակով և դուրս բերվում շինությունից: Խողովակի վերջնամասում նախատեսված է ընդհանուր փոշեհավաք թևք /պարկ/, որի միջոցով նվազագույնի կիասցի փոշու արտանետումները:

ԾՄԱԳ հաշվետվությունում հաշվարկվել է անվադողերի կտրատման և մանրացման արդյունքում առաջացող փոշու /ախնդ մասնիկների ծևով/ արտանետումները: Արտադրամասում գործող երեք ջարդիչներից, տարեկան առավելագույն արտադրողականության դեպքում վերանշակվող հումքից կառաջանա. ընդամենը 2.024 տ/տարի փոշի: Բոլոր փոշեհավաք համակարգերի արդյունավետությունը կազմում է՝ 0.96, փոշեկանումից հետո արտանետվող փոշու քանակը կկազմի 0.081 տ/տարի: Արտաներումների նշված քանակը ենթակա չէ նորմավորման: Հաշվետվությունում գնահատվել է մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով պատճառված վնասը, որը կազմում է 3240 դրամ/տարի:

Հաշվի առնելով, որ տարածքը բոլոր կողմերից շրջապատված է արտադրական շինուազուններով և պահեստներով, իսկ մոտակա բնակելի թաղամասը գտնվում է ավելի քան 900 մ հեռավորության վրա, իսկ նշված գործունեության համար ՍՊԳ սահմանված է 300 մ, հատուկ միջոցառումներ ՍՊԳ վերաբերյալ չեն նախատեսվում:

Արտադրամասի ջրամատակարարումն իրականացվում է Երևանի ջրամատակարարման ցանցից, տարածքում առկա ջրամատակարարման խողովակից: Զուրը օգտագործվելու է միայն սպասարկող անձնակազմի խմբելու և կենօնադաշին կարիքների համար:

Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը կկազմի օրական՝ 0.132 մ³/օր։ Կենցաղային հոսքաջրերը միացված են քաղաքային կոյուղատարին։ Սարքավորումների մաքրումը իրականացվելու է ծեռքով՝ չոր եղանակով, արտադրամասում հոսքագրեր տես առաջանալու:

Գործունեության ընթացքում կառաջանան երկու տեսակի արտադրական և թափոններ, որոնք ներառում են՝

- դողածածկաններից առանձնացված պողպատյա լարեր և մագնիսական սեպարատորներում հավաքված պողպատի փոշի՝ 30 – 32 տ/տարի քանակությամբ, որը հավաքվում են անմիջապես արտադրական շինության եզրային մասում և վաճառվում համապատասխան լիգենզավորված ընկերություններին:

- Զարդող, մանրացնող սարքերի փոշեռուսիչ պարկերում որսված խառը փոշի /ընդհանուր՝ 1.95 տ/տարի քանակով/, որը պարունակում է դողածածկանների ռետինե փոշի և կորունդի բամբակյա թելերի կտորներ: Նշված թափոնները ներառում են պոլիմերային նյութերի փոշի՝ աղազող սարքավորումների գոհիններից և բամբակի փոշի:



Պողպատյա լարերը պահեստավորվում են բաց եղանակով, իսկ փոշեռսիչ պարկերում նստեցված փոշին՝ պարկերի մեջ: Թափոնների տեղափոխումը կատարվում է յուրաքանչյուր 2-3 տ խմբաքանակի համար գնորդ կազմակերպության կողմից: Արտադրամասի շահագործման ընթացքում, սպասարկող անձնակազմի կենսագործունեության արդյունքում առաջացող կենցաղային աղբը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի քաղաքային աղբավայր: Արտադրական գործընթացում առաջացող թափոնները համապատասխան աղբավայր կտեղափոխվեն <<օրենսդրական պահանջներին համապատասխան:

Քանի որ արտադրական գործընթաները տեղի են ունենալու փակ շինության մեջ, արտադրական գործընթացները չեն առաջացնի աղմուկի բարձր մակարդակ: Ընդհանուր առմամբ սպասարկող անձնակազմը /որի թվաքանակը կազմի 6 մարդ/ կապահովվի անհրաժեշտ արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով:

Հաշվի առնելով առավելագույն արտադրողականությունը, անվադողերի օրական տրանսպորտային տեղափոխման համար կապահանջվի 1 երթ օրական, իսկ արտադրանքի տեղափոխման համար՝ 2 երթ շաբաթական: Այս քանակները չեն կարող առաջացնել երթևեկության ծանրաբեռնվածություն:

Նախատեսվող գործունեության բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա բացառելու և նվազագույնի հասցնելու նպատակով նախատեսված միջոցառումները /որոնք իրականացվելու են Ընկերության կողմից և ներառված են բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծրագրերում/ ներառում են հետևյալները.

- Բանեցված դողածածկանների կտրատումը և մանրացումն իրականացնել փակ շինության մեջ,
- Գործընթացների տեղամասերը կահավորել բնական օդափոխության համակարգով:
- Արտադրական հանգույցն ապահովել հակարդեհային համակարգով,
- Պարբերաբար իրականացնել բանվորական միջավայրի, օդամիջների և փոշեկլանիչ պարկերի մոնիթորինգ և անհրաժեշտության դեպքում՝ սարքավորումների կարգաբերում,
- Թափոնների հետ աշխատելիս անձնակազմը պետք է կրի հատուկ անհատական պաշտպանիչ միջոցներ՝ ձեռնոցներ, դիմակներ և արտահագուստ,
- Սպասարկող անձնակազմը պետք է անցնի նախնական և պարբերական հրահանգավորում:
- Արտադրամասի հարևանությամբ պաշտպանիչ շերտով ծառատունկի իրականացում:

Բնապահպանսկս միջոցառումների իրականացման համար նախատեսվել են ծախսեր: Ըստ նախնական գնահատման մոնիթորինգի ծախսերը կկազմեն՝ 240000 դրամ/տարի՝ առաջին տարվա համար, իսկ 80000 դրամ/տարի հետագա տարիների համար:

Պարբերաբանական մաս. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության փուլերում, <<օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Նախագծային փաստաթղթերի վերաբերյալ փորձաքննական գործընթացում շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, առողջապահության նախարարությունից քաղաքապետարանի կողմից ստացված կարծիքները ևս հաշվի են առնվել:



Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեությունն ունի իր կարևորությունը բնապահպանական և առողջապահական տեսանկյունից, քանի որ անկանոն ձևով կուտակված թափոնները /բանեցված անվադողեր/, հանդիսանալով շրջակա տարածքների աղտոտման աղբյուր, վերամշակումից հետո կդառնան օգտագործելի: Ընկերության կողմից նախատեսվող՝ Բանեցված անվադողերի վերամշակումը կարևոր է թափոնների կառավարման տեսանկյունից, քանի որ կնպաստի նշված թափոնների կառավարման հետ կապված շրջակա միջավայրի խնդիրների լուծմանը: ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված միջոցառումների իրականացման արդյունքում աղտոտվածությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Արտադրական գործընթացի իրականացման ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը, կարևորելով՝ դողաձաձկանների վերամշակման ընթացքում անձնակազմի անվտանգության միջոցառումների ապահովումը:
2. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է << օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ վտանգավոր թափոնների գործածության լիցենզիա:
3. Գործունեության ընթացքում առաջացող թափոնների համար սահմանված կարգով մշակել թափոնի անձնագիր, համաձայնեցնել այն շրջակա միջավայրի նախարարության հետ և թափոնի տեղադրումն իրականացնել ըստ անձնագրի:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Քերմ աստղեր» ՍՊ ընկերության կողմից նախատեսվող բանեցված անվադողերի վերամշակման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացնություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

